

## ՊԱՏՄՈՒԹԻՏԱԿԱՆ

**ԷՇՄԻԱԾՆԻ ԴԱՇՏԻ ՈՌՈԴՈՒՄԸ**

**ա. Պատմական տեղեկութիւններ**

Աբարատեան տաշտի այն մասը, որի վրայ են շինուած սուրբ Էջմիածինը իւր յարակից վանքերով, պտղաբերութեամբ և առողջապահական տեսակէտից, ինչպէս նաև դեղեցկութեամբ և յարմարութեամբ, անկասկած, ամբողջ տարածութեան մէջ աչքի է ընկնում։ Դաշտի այդ մասից դէպի արևելահարաւ և արևմուտք տարածւում են ընդարձակ ճահիճներ և բորակով ծածկուած, մշակագործութեան համար ոչ շահաւէտ տափարակներ, իսկ դէպի հիւսիսարևելք գտնւում են յայտնի առապարները հրաբխային քարակառկառներով և լաւայի հաստ շերտով ծածկուած։ Բացի այդ, երեք լեռնային գետակներ՝ Քասախ, Հրազդան կամ Զանգու և Սևջուր, հոսելով նրա միջով կամ անմիջական սահմաններում, ներկայացնում են մեծամեծ յարմարութիւն թէ մշակագործութեան և թէ ընակութեան տեսակէտից։

Այդ հանգամանքով է բացատրւում, որ հին հայերը այդտեղ են ընտրել իրենց համար մայրաքաղաք շինելու տեղ. Հայաստանի գլխաւոր սրբավայրերը այդտեղ են կենդրոնացած. նախապատմական շրջանի վիթխարի մոխրակոյտերը և կուրգանները, ուրարտեան շրջանից Զուարթնոցի աւերակներում ի յայտ ածուած սեպաձև արձանագրութիւնը, հռովմայեցիների տիրապետութեան ժամանակից անկորուստ պահուած լատինական երեք արձանագրութիւնը, բոլորը միասին գալիս են հաստատելու, որ դաշտի այդ մասի կարևորութիւնը մշտապէս հասկացել են և լայն չափով օգտուելու

Սակայն դաշտի թէ բնակութեան և թէ մշակագործութեան անհրաժեշտ պայմանն է՝ արհեստական ոռոգումը։ այն կտոր հողը, որ ամառուայ շոքերին չի ենթարկւում զովացուցիչ և կենդանացուցիչ ոռոգման, մշտապէս մնում է անապատ։ Զուարթնոցի սեպաձև արձանագրութիւնը ապացոյց է, որ Քրիստոսից դեռ շատ դարեր առաջ տեղացի բնակիչները գիտէին այդ և դիմում էին այդ միջոցին։

Որովհետեւ յիշեալ արձանագրութեան մէջ ուրարտեան Խուսա թագաւորը, Արգիշտի որդին, պատմում է, որ նուածել է Կուարլինի աշխարհը և Իլդարու գետակից ջրանցք բերել տալով տնկել է այգի և շինել քաղաք։ Իրաւ է, յայտնի չի, թէ Ներսէս Գ. կաթուղիկոսը իւրաշէն եկեղեցու մէջ որտեղից է բերել այդ արձանագրութեան քարը։ սակայն հաւանական է, որ նա այդ խոշոր քարը շատ հեռու տեղից չի բերել տուել, այլ վերցրել է Զուարթնոցի անմիջական շրջակայքից, ուր դեռ այսօր հողի տակ ծածկուած երեսում են հին շինութիւնների հետքեր։ Իսկ թէ Իլդարուն ինչ գետակ է, Քասախը թէ Զանգուն, այդ մասին կ'յայտնենք մեր կարծիքը։

Յիշեալ գետակներից Զանգուն սկիզբն է առնում Սևանի լճից, որ ճանապարհին միանում է Դարաշիչակի կամ Շաղկոցաձորի բարձունքներից բղխող Միսխանի ջրի հետ և մինչև Երևան քաղաքը յորդանալով մեծամեծ աղբիւրների ջրերով, Զաֆարապատ գիւղի մօտ դուրս է գալիս Արարատեան դաշտը, ապա թափւում է Երասխ գետը՝ ձախ կողմից։ Մինչև նրա դաշտ դուրս գալլը նա սեղմուած է երկու կողմից սեպացած ժայռերի մէջ և նրանից ոռոգելու համար ջրանցքներ վերցնելը կապուած է մեծ դժուարութիւնների հետ, մանաւանդ գետակի աջ ափիցը։ Այդ ափիցն են սկիզբն առնում Երևանի և Էջմիածնի դալմաները, ջրի անցնելու համար շինած խոշոր տուննելները։

Քասախ գետը սկիզբն է առնում Արագածի չորս գագաթների միջի ձորակից բղխող ջրերից, որ գլորուելով միշարք բարձր ջրվէժներով Խազնաֆար գիւղի մօտ մտնում է Ապարանի լեռնադաշտը, բազմաթիւ աղբիւրներով և հեղե-

դասներով յորդանալով, Օշական, գիւղի մօտ միանում է Շահվերդի խոշոր աղբեմբի, մի փոքր յետոյ Ամբերդայ ձորակի հետ, Հաջիղարա գիւղի մօտ երկու ափերից սեղմող ժայռերի միջից դուրս գալով դարձեալ մտնում է Արարատան դաշտը Մյու գետակը հոսում է Էջմիածնի դաշտի հիւմբից հարաւ. վանքի արևմուտքում միանում է Սև ջռը գետակի հետ և ապա թափւում Երասխո Այս գետակից արխեր հանելը նախկինի պէտ դժուարչէ բացառութիւն է կազմում Աշտարակի առուն, որ վերադրում են Ականատես վարդապետներ

Վերջապէս Սև ջռւը սկիզբն է առնում դաշտի ամենացած մասում: Լաւայի հաստ շերտերը ծածկել են Արագածից հոսող ջրերի միւմասը, որ վիթխարի աղբիւրների ձևով, ահազին ուժով բղխում են Էջմիածնի վանքից արեւմուտք, եօթ վերսա հեռու, Այդգիւ լճակից և նրա մերձակայքից: Այդտեղից մինչև Երասխ գետը Արարատան դաշտի ամենահարթ և ամենացած մասն է. լսու մեծի մասին ծածկուած ճահճներով և բորակի հաստ շերտով: Ուստի հասկանալի է, որ Սև ջրից արևի հանելը որևէ դժուարութիւն ներկայացնել չի կարող. մի կողմ թողած որ նրա ենթակայ դաշտը շատ ջրուելու կարիք չէնի-և գետակի ամենամեծ մասը անօդուած թափւում է Երասխի մէջ:

Վերջապէս հարթաշատի գործիքով ասվացուցուած է, որ Էջմիածնի դաշտը կարելի է ոռոգել նույն Երասխի ջրերով, որից վերցրած արևը կտրելով Արդարապատի դաշտը կհասնի մինչև վանքի հողերի ամենաբարձր տեղերը:

Ոռոգելու ջռւը կարելի է ստանալ նույն սառերկրեայ ջրերից: Որովհետեւ ամբողջ դաշտը արևելահիւտիսից ընկած է դէպի հարաւ արևմուտք և գնալով աստիճանաբար բարձրից իջնում է և, որովհետեւ որոշ խորութեան վրայ մեծ քանակութեամբ ստորերկրեայ ջրեր կան, ուստի ձեռնարկել են մի շարք հորեր փորել, իրար հետ ստորերկրեայ անցքերով միացնել և աստիճանաբար երկրի երեսը հանել: Դոքա են այսպէս կոչուած քանքաները: Ամենահին ժամանակներից Էջմիածնի դաշտում ապ-

բողները դիմել են, բացի Երասխից, յիշեալ միւս բոլոր աղքիւրներին, ոռոգելու և խմելու ջուր ստանալու համար։

Մեր ունեցած պատմական տեղեկութիւնները սոքա են Զուարթնոցի հոյակապ եկեղեցու շինող Ներսէս Ք. Տայեցի կաթուղիկոսը։ Դրդ դարում Քառալու գետից ջուր է բերում շէնացնելու իւրանորակառուց շինութիւնով ների անառատ շրջակս լրջ։ Պեղումներով յայտնադրծուել են կաթուղիկոսի այդ ձեռնարկութեան ճետքերը, որի մաս սին պատմել են Սերէսու և Յովհաննէս պատմադիրները։ Ած ջուր և երեր զգետոյն և արկ իրործ պամենայն վայրու առաջար, անկեաց այզիս և ծառատունկաց գրում է Սերէսու (էջ 186), առանց յիշատակելու գետակի անուշնը։ Այդ թերին լրացնում է Յովհաննէս պատմադիր կաթուղիկոսը։ Ածեալ ջուր ի հասախ դետոյ զամենայն աւաղախիտ առաջտուր դաշտավայրն ի գործ արկանէր, անկէր, այզիս և բուրածտանու ծաղկոծաց (էջ 112, տես Մեսրոպ վ. Էջմիածին) և հայոց հնագոյն եկեղեցիներ՝ էջ 31—32)։

Քանախի այս արխը, որ տեղի դիրքին նայելով, հնում և այժմ նոյն ուղղութեամբ է հոսել, յայտնի է Շահարի անունով, ակիզբն է առնում վանքի հիւսիսային կողմում Հաջիղարտ գիւղի մօտ, այնտեղից ուր գետը դուրս է գալիս Օշական գիւղի սահմաններից։ Մինչև այդ տեղը գետակը սեղմուած է լաւայի հաստ շերտերից կազմուած բարձր ժայռերի մէջ, իսկ այնուհետև մկսում է բաց ազատ դաշտը, ինչպէս Զանգուեն Զափարաբար գիւղի մօտ, Երասխը Ղարաղալա գիւղի մօտ։ Փէ դարում, Փիլիպոս կաթուղիկոսի օրով գետակի ջուրը չի բաւականացնում տեղական կարիքներին։ կաթուղիկոսը մտածում է նոր հոսանքով մէծացնել ջրի քանակը։ Նա Արագածի որոշ ջրի հոսանք, որ բնական ընթացքով թափւում էր Շիրակի դաշտը, ուղղում է դէպի Քանախ գետակը։ Այսպիս մայզրադու

1909 թ. ամառը ես բարձրացայ Արագածի գագաթը կաթուղիկոսական Բիւրտկան ամարսնոցից։ Ընկերներով որոշել է ինք նախ այցելել Կարագիշ կոչուած լճակը, որ գտնուում է լեռան չորս գագաթների արևմատահարաւային

փեշերի տակ: Բիւրականից 15—20 վերստ ճանապարհ անցնելուց յետոյ, անընդհատ բարձրանալով, ընդարձակ բարձր սարադաշտի վրայ հանդիպեցինք արհեստական մի մեծ արխի, որի միջով շատ փոքր ջուր էր բղխում. բաւականանալով միմիայն վրանաբնակ քիւրդերի խաչներին և իրենց կարիքներին: Այդ արխը բարձրանալով հիւսիսային ուղղութեամբ, թեքում է դէպի արևելք և պատռում է պիթխարի մեծութեամբ մի բլուրի դէպի Ամբերդի ձորը դարցած փեշերը, որ ամբողջովին ծածկուած են անվերջ քարակառկառներով: Երաւամբ մեծ աշխատանք էր հարկաւոր մաքրելու անշափ քարերի տարածութիւնը և արխը հասցնելու կարագեօլին:

Անկասկած Փիլիպպոս կաթուղիկոսի շինած արխն է այդ, որով լճի աւելցուկ ջրերի հոսանքը Շիրակի դաշտից շրջել է դէպի Քասախը, Ամբերդի ձորի միջով: Արխը՝ այժմ կորցրել է իւր կարեռութիւնը. որովհետև կարագեօլը լեռնային լճերին յատուկ եղանակով, ենթարկուել է բնական մահուան—գնալով նուազել են նրա ջրերը և այժմ մի փոքրիկ լճակ է, սակաւ ջրերով: Սակայն ներկայ պայմաններում ևս կարելի է օգտուել այդ լճից. նա իր դիրքով ներկայացնում է բնական ջրամբար Սևանայ լճի պէս և միայն մի անցք ունի՝ Փիլիպպոսի արխի սկսուածքը: Կարելի է և պէտք է տարուայ մէջ 8—9 ամիս արհեստական պատնէշով փակել այդ անցքը և ամառուայ երեք ամիսը արձակել ամբարուած ջուրը: Լճի ներկայ մեծութիւնը մօտաւորապէս մի քառակուսի վերստ է. արհեստական պատնէշով հնարաւոր է կրկնակի քանակութեամբ ջուր ունենալ:

Զանգուի ջրից օգտուելու հնագոյն տեղեկութիւնը 17 դարուց է: Շահխաթունեան Յովհաննէս եպիսկոպոսը իւր Սուրագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի (լ. էջ 137) հաղորդում է չափազանց կարեռ տեղեկութիւններ: Այդ արխի սկիզբը, պատմում է նա, բանալ է տալիս Երևանցի Բուրձալիբէկ անունով մի թուրք, իւր կաւակերտ հողերի ոռոգման համար: Սակայն գործը թողնում է կիսակատար

և նրա ժառանգները Խղմաթ Ղուլիբէկ, Մահմադ Ղուլիբէկ և Թամուր Ղայարէկ արխի իրաւունքը 1698 թ. վաճառում են Նահապետ կաթուղիկոսին ի սեպհականութիւն Մայր Աթոռի: Սա շարունակում է կիսատ գործը և ջուրը բերում հասցնում մինչև Հոփիսիմէի մօտերքը, մինչև Վաղարշապատի այգիները:

Մի քանի տարի անց, Աստուածատուր կաթուղիկոսի օրով Բուրճալիբէկի ժառանգները անիրաւաբար սկսում են ջրի մի մասից օգտուել իրենց հողերի ոռոգման համար: Կաթուղիկոսը գրում է Երևանի Սարդարին և սա քննելով վանքի հաստատուն վկայագրերը, 1716 թ. վերահաստատում է:

Անցնում է ժամանակ. անյայտ պատճառներով դադարում են օգտուել այդ արխից: Այսուհետեւ, ոչ ներսէսերդ կաթուղիկոսը, որ ջրի համար մեծածախս լին է շինում, ոչ նրանից առաջ և ոչ յետոյ մինչև Գէորգ Դ. կաթուղիկոսը չեն օգտում այդ ջրից: Սակայն հետաքրքիր է ստուգել. իրաւ է, որ մի մասնաւոր թուրք է էջմիածնի դալմայի և արխի առաջի ձեռնարկողը:

Արդիշտի որդի Ռուսան ջրմուղին բերել է իլդարուն գետից. որն է այդ գետակը, արդեօք Քասախը թէ Զանգուն: Քասախի Շահարխը հոսելով հիւսիսից դէպի հարաւարելք բնական թեքութեամբ իջնող դաշտավայրի միջով, արքայավայել ձեռներեցութեան մի մեծ գործ չէ: Սովորական մահկանացուները առանց արքայի օգնութեան կարող էին այդպիսի գործ զլուխ հանել: Բոլորովին նոյնը չէ Զանգուի արխը:

Սրա տարածութիւնը սկսուածքից մինչև էջմիածնի հողերը Մայր Աթոռի պատուերով պատրաստուած նորագոյն յատակագծով 21 վերստ է. լինելիք ծախսի գումարը հաշուած է 90,000 ռուբլի, չհաշուած հնութիւնից մնացած պատրաստի տունելը 110 սաժէն երկարութեամբ, որի վրայ կարող է ծախսը լինել 15000 ռուբլուց ոչ պակաս:

Արխը սկսւում է Երևանի կամուրջը մօտ  $2\frac{1}{2}$  վերստ ցած. թուրքական Խարաբա Խարվանլար կոչուած գիւղի-

մօտից և պատռելով բազալդի ամուր քարի սեպացած ժայռը երկու վերան տարածութիւնից յետոյ մտնում է 110 ս; նրկարութեամբ տուները Այնունետեւ ամբողջ ճանապարհը, արևելքից արևմուտք ուղղութեամբ Ուշմափալարի ձորակը կտրելով, Զաֆարաբադ և Փարաքար գիւղերի հիւսիսային սահմաններով գալիս հասնում է Էջմիածնի դաշտը: Ճանապարհը ներկայացնում է փոքր և մեծ բլուրների և համապատասխան ձորակների և հովիտների անհարթ տարածութիւն: Չորակների մէջ ներկայումս ծրագրուած են 5 աքվեգուկ, ջրակամուրջներ, իսկ հին ժամանակներում հաւանական դոցա տեղը բոնել են հողային մեծածախս պատճենէներ: Տեղ տեղ ամբողջ քարեայ շերտեր պիտի պատռել, բազալտեայ կամ համեմատաբար ոչ այնքան կարծր հրաբխային քարեր արխի հիմքը բանալու համար:

Հստ վկայութեան Շահիսաթունեանի Բուրձալիբէկը Զանդուից արխի հանում էր ոռոգելու իւր Կաւակեց կալուածքը և նրա շրջակայքը: Կաւակերտ անուամբ գիւղ այժմ չկայ այդ արխի ճանապարհի վրայ, դորա փոխարէն կան Զաֆարաբատ և Փարաքար գիւղերը: Զաֆարաբատի հողերում գտնուում է մի հին գիւղի աւերակ, գեղեցկաշէն եկեղեցու աւերակներով և անկասկած այդ է եղել Կաւակերտը: Նորա հողերի մեծ մասը ջրւում է Զանդուի ջրով և բերուած է սովորական արխով, առանց որ և է տունելի և շատ դիւրին ճանապարհով: Անջրդի մնացած մի քանի տասնեակ դեսեատին հողի համար որ և է մասնաւոր անհատ չէր կարող ձեռնարկել այնքան մեծածախս մի առուի որպիսին է վանքի դալմի առուն:

Ամենաբնական բացագրութիւնն է, այդ դալման կամ տունելը գոյութիւն ունէր և Բուրձալիբէկը օգտուել է նրանից, իսկ ժառանգները ձեռնուու պայմանով վաճառել են նահապետ կաթուղիկոսին: Հաւանական է ենթադրել, որ մեծագոյն արխի բուն հեղինակը և ձեռնարկողը Արդիշտի որդի Ռուսա ուրարտեան թագաւորն էր:

Երևանում աւանդաբար շատ է պատմւում պարսիկ իշխողների ձեռներեցութեան մասին երկրի ոռոգման

խնդրում։ Երեան քաղաքի նշանաւոր գալման, որով անցէ կացրած Երեանի այգիների մեծ արխը, վերագրում են մի թուրք սարգարի։ Սակայն մեծ հիմք կայ այդ աւանդական պատմութիւններին մեծ կասկածանքով վերաբերուելու։ Քաղաքակրթական այդպիսի խոշոր ձեռնարկութեան իր հեղինակ սարդարներից, բացի քստմնեցուցիչ արհաւիրալից պատմութիւններից, իրեւ պատմական կոթողներ մնացել են հում աղիւսից և անտաշ փոքրիկ կտոր քարերից շինուած Երեանի պարիսպը, նոյն ձևով շինուած մեծանուն «սարդարի պալատ» անարուեստ վիճուածքը և մի քանի մէջիթներ։ Բոլորը ներկայացնում են ճաշակի կատարեալ բացակայութիւն։ Յամենայն դէպս մի բան հաստատ է։ Նոցա մէջ բացակայում էր քարից օգտուելու արուեստը։ Երեանի դիւրին մշակուող հրաբխային անհատնում քարահանքները չեն թելազրել թուրքերին աղիւսի փոխարէն անցնելու քարեայ շէնքերի։

Բնական է կարծել, որ նոքա մտածել անգամ չէին կարող բազալտի լեռները պատռել և արխեր անցկացնել։ այդ արուեստը մշակել և արտասովոր կատարելութեան էին հասցըրել ուրարտացիք։ Արմաւրի, Թոփրակկալէի, Վանի և այլն աւերակները, բազալտի վրայ փորագրած սեպաձև արձանագրութիւնները, մենեանների և արքայական պալատների սիւների խարիսխները, ժայռերի մէջ շինուած բնակարանները, բոլորը հաստատում են թէ ուրարտացիները ամենակարծր քարի հետ ինչպէս վարուել գիտէին և ինչպէս էին նրանից օգտուում։

Սորա հետ միասին յայտնի է, որ ուրարտացիները մեծ վարպետ էին ամենագժուար տեղերով առուներ շինելու և ժեռ քարերի վրալ սեպաձև արձանագրութեամբ յաւերժացնելու ձեռնարկողների յիշատակը։ Գերմանացի Լեման գիտնականը մի շարք արձանագրութիւնների մէջ կրկնուող պիլի բառը թարգմանել էր արխ, որովհետև այդ բառը գտնուում է սովորաբար այն քարերի վրայ, որ արխերի հետ կապ ունին։ Այդ բացազրութիւնը հաւանականութիւնից աւելի հաստատեցին Երասխի ափին, դէպի

Սարդարապատի դաշտը տանող արխի սկսուածքում բնական ժայռի վրայ գրած և յետոյ Զուարթնոցի արձանագրութիւնները։ Մենք հաւատացած ենք, եթէ ուշադրութեամբ ուսումնասիրենք Երևանի և Էջմիածնի դալմաները մեր այս կարծիքը հաստատող նոր կոռւաններ կ'գտնենք։ Հաւանական է եղել են նաև արձանագրութիւններ, բայց դարերի ընթացքում բնութեան ամենատեսակ պատահարներին ենթակայ ժայռերը վլչել վլորուել են և այժմ դըժուար է հնութեան հետքերը գտնել։

Յամենայն դէպս ներկայումս այս հնութիւնից պատրաստի դալմիցն է որ Էջմիածնի վանքը որոշել է ջուր բերելու և իւր հազարաւոր դեսեատին ամայի հողերը ոռոգելու։

Աեւցուր գետակից մի աննշան արխ է հանած, որով ոռոգւում են վանքի ղորուղների մի մասը։ Յայտնի չէ թէ երբ և ով է հանել այդ արխը։

Քանեանեւրի մասին մեր ունեցած տեղեկութիւնն այս է։ Յակոր Զուղայեցի կաթուղիկոսը «տեսանելով զկարի հարկաւորութիւն մաքուր ջրոյ մանաւանդ յամառնային եղանակի և ի սաստիկ ցրտութեան ձմրան՝ թէ վասն հոգեորական ժառանգաւորացն մենաստանի և թէ վասն երթևեկացն յանուն սրբոյ տաճարին» (Յահիաթունեան էջ 88-89) փորել է տալիս քանքան վանքի արևմտահիւսիսային ուղղութեամբ դէպի Քասախ գետը և ստորերկրայ մաքուր սառնորակ և առողջարար ջուրը բերում վանք, խմելու և շրջակայ պարտէզները ջրելու համար։ Նա ջուրը բաժանում է այսալէս։ մի մասը շուկայի հանդէպ քարեայ աւազանով թողնում է շուկայի և գիւղի բնակիչների համար։ Երկրորդը Սիմէռն կաթուղիկոսի օրօք շինած մոմատան առաջ, երրորդ բաժինը միաբանութեան շինութեան առաջ։ Այս խողովակներից հոսող աւելցուկ ջրերը գետնափոր ճանապարհով թափւում են Փիլիպպոս կաթուղիկոսի շինած «սառը քանքանը»։ Զորրորդ բաժինը մտնում է կաթուղիկոսարանի բակը և այնտեղից բաղնիսը, որը գտնելում էր հարաւ արևմտեան անկիւնում։

Քանքանի ճիւղաւորութիւնը Շահխաթունեանը այսպէս է գտել. այդպէս է և այժմ, միայն նոր ճիւղեր են աւելացել. զէպի Գէորգեան Ճեմարանի բակը, Երեմիա եպիսկոպոսի շինել տուած միաբանական խցերի առաջը, տաճարի հարաւում, գինետան մօտ տեղափոխուած բաղնիսը, Խրիմեան կաթուղիկոսի շինել տուած խոհանոցն ու փուատունը, որ գարձեալ հարաւային կողմունն են:

Այդ քանքանից ժամանակով աւելի հին է Փիլիպպոս Հազբակեցի կաթուղիկոսի շինել տուած Սառը քանքանը: Սա տեսեալ թէ խոնաւութիւն զետնոյն ի մէջ պարսպին՝ վնաս մեծ գործէ շինուածոյն և տաճարին իսկ» (Շահ. էջ 88) տաճարի հարաւային կողմից փորել է տալիս մի մեծ հոր, ստորերկրիայ անցքերով տանում հասցնում է Գայանէի վանքից ներքե, բաւական հեռու: Այդ եղանակով մեծագործ կաթուղիկոսը մտածում է խոնաւութիւնից ազատել վանքի շինութիւնները և միհնոյն ժամանակ անասունների ամառուայ համար ջուր է ստանում:

Փիլիպպոսի սկսուածքը յետոյ շարունակում է Սիմէոն Երևանցին և չբաւականալով հարաւային կողմի հորով, փորել է տալիս հորերը տաճարի շուրջը, միաբանութեան բնակարանների առաջ, որպէսզի այսպիսով չորացնի խոնաւ խուցերը:

Սակայն քանքանների գործը չի սկսուել միայն այս կաթուղիկոսների օրով: Ճեմարանի բակում կան հին քանքանների հետքեր, որ անկասկած շատ աւելի կանուխ են, քան յիշեալները, միայն պատմական տեղեկութիւններ չի պահուած:

Այսքանով լրանում է մեզ յայտնի պատմական տեղեկութիւնները մինչև ներսէս ե. կաթուղիկոսի ժամանակը էջմիածնի դաշտը ոռոգելու և բնակիչներին խմելու ջուր մատակարարելու խնդրի նկատմամբ:

**Մերօպ Եպիսկոպոս.**

1912 թ. 5 մարտի.